ՀՀ ՆԳՆ ՄՔԾ
անձը հաստատող փաստաթղթերի
թողարկման վարչության պետ
Աննա Մակարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության Տաշիրի բաժնի փորձագետի կողմից
կատարված աշխատանքների վերաբերյալ
08.06.2026-08.09.2026

2026 թվականի հունիսի 8-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության Տաշիրի բաժնի փորձագետ՝ Կարինե Ռոբերտի Հարությունյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ պետական և այլ մարմիններից ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության Տաշիրի բաժին հասցեագրված ոչ գաղտնի փաստաթղթերի հաշվառմանը և ըստ մակագրության համապատասխան հասցեներին առաքման աշխատանքներին.
2. Մասնակցել եմ ՄՔԾ Տաշիրի բաժնում դիմումների, բողոքների և առաջարկությունների հաշվառմանը, թվայնացմանը, ըստ մակագրության կատարողներին փոխանցմանը, դրանց կատարման ժամկետների հսկողությանը, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրմանը .
3. Հավաքագրել եմ գրություններով պահանջվող արխիվային փաստաթղթերի պատճեններն ու պատասխան գրությունները.
4. Մասնակցել եմ գործավարության կարգի պահանջներին համապատասխան ՄՔԾ Տաշիրի բաժնից առաքվող և ՄՔԾ.Տաշիրի բաժին մուտքագրվող փաստաթղթերի, նամակների ու դիմումների փաստաթղթաշրջանառությանը.
5. Մասնակցել եմ արխիվային փաստաթղթերի սահմանված կարգով պահպանման, օգտագործման, տրամադրման և փաստաթղթերի արխիվ հանձնման ու դրանց արխիվացման աշխատանքներին.
6. Մասնակցել եմ նույնականացման քարտի դիմումների ընդունման և հանձնման գործընթացին

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ Տաշիրի բաժնի փորձագետ Կարինե Հարությունյան

«09» սեպտեմբեր 2026թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության
ծառայության Տաշիրի բաժնի պետ

Ռաֆիկ Անտոնյան
«09» սեպտեմբեր 2026թ.